



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ. փոստ kotayk@mta.gov.am

_____ N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Միրելի՛ հայրենակիցներ, կոտայքցիներ,

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Աշխատանքի և աշխատավորի միջազգային օրվա առթիվ:

Ազնիվ, արդար ու նվիրված աշխատանքը բարեկեցիկ ու արժանապատիվ կյանքի գլխավոր երաշխիքն է: Մեր ժամանակի հերոսը կա ու կլինի աշխատող և ստեղծող մարդը:

Մենք աշխատանքի կարևորությունը գնահատող մարդու կողքին ենք և համատեղ ուժերով շարունակելու ենք մեր գործուն քայլերը՝ ուղղված նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործազրկության վերացմանն ու աշխատող մարդու իրավունքների պաշտպանությանը:

Պետությունն ամեն հնարավոր քայլ անում է, որ մենք որքան հնարավոր է անցնցում ու անհետևանք հաղթահարենք համավարակի մարտահրավերը և հնարավորինս քիչ տուժենք դրա բերած տնտեսական հետևանքներից:

Թող աշխատանքային ձեռքբերումները ձեր կյանքի անբաժան մասը դառնան:

Ի գործ՝ հանուն մեր ընտանիքների և մեր երկրի բարօր ապագայի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ